ԴԵՊԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ

Նոյեմբերի 29-ին լրանում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հիմնադրման 10-ամյակը։

Շնորհիվ Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության հոգատար վերաբերմունքի դեպի գիտության զարգացումը Հայաստանում, որտեղ մինչև ռևոլյուցիան չի եղել ոչ մի գիտա-հետազոտական հիմնարկ, այժմ ստեղծվել է գիտա-հետազոտական ինստիտուտների և լաբորատորիաների նշանավորված մի ցանց, որը մտնում է Գիտությունների ակադեմիայի կազմի մեջ։

Գիտությունների ակադեմիայի հիմնադրումը հնարավոր եղավ շնորհիվ այն հանգամանքի, որ Հայաստանում ստեղծվեցին գիտական ներուժ պատասխանող շնորհալի կադրեր և անհրաժեշտ նյութական բազա։

Գիտական երիտասարդ կադրերի պատրաստման գործում խոշորագույն դեր խաղաց ռուս գիտնականների օգնությունը։

Առանձնապես պետք է նշել այնպիսի հայտնի ռուս գիտնականների, ինչպիսիք են՝ ակադեմիկոսներ Ի. Մ. Վինոգրադովի, Մ. Վ. Կելդիշի, Ս. Լ. Սոբոլևի, Ի. Ն. Նազարովի և շատ ուրիշների հոգատար վերաբերմունքը մեր երիտասարդ գիտնականների աշխատանքի դեկավարման գործում։

Հայաստանի Գիտությունների ակադեմիան իր կարևոր խնդիրներից մեկն է համարում զարգացնել այն լավագույն տրադիցիաները, որոնք հաղորդվել են մեր գիտական երիտասարդներին ռուս խոշոր գիտնականների կողմից, այն է՝ մասնագիտական հարցերի լավ ըմբռնում, ուսումնասիրվող հարցի բայն ընդգրկում, սերտ կապ գործնական կյանքի հետ և անսահման նվիրվածություն դեպի ժողովուրդը։

Իր աշխատանքում ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիան հասել է որոշ հաջողություններ։ Այդ հաջողությունները կարող են հիմք ծառայել գիտական աշխատանքի նոր վերելքի համար։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան այժմ իր կազմում ունի հինգ բաժանմունք՝ Ֆիզիկո-մաթեմատիկական, Տեխնիկական, Բիոլոգիական, Գյուղատնտեսական և Հասարակական գիտությունների բաժանմունքներ, որոնցից յուրաքանչյուրն իր կազմում պարունակում է մի քանի գիտա-հետազոտական ինստիտուտներ և լաբորատորիաներ։

Առանձնապես գլուխ հաջողությունների են հասել Ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների բաժանմունքի գիտնականները։ Այս փաստը առավել հետաքրքրական է այն տեսակետից, որ մինչև ակադեմիայի հիմնադրումը Հայաստանում համարյա բացակայում էր գիտական աշխատանքը ֆիզիկո-մաթեմատիկական առարկաների գծով։ Մոտավորությունների տեսության բազմաթիվ խնդիրներ լուծված են մաթեմատիկաների երիտասարդ կոլեկտիվի կողմից, մի կոլեկտիվ, որն աշխատում է ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ա. Լ. Շահինյանի դեկավարությամբ։ Այստեղ հատկապես պետք է նշել ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ս. Մ. Մերզեյլյանի և պրոֆեսոր Մ. Մ. Ջրբաշյանի արդյունավետ աշխատանքը։ Նրանց հայտնագործությունները կապված են կիրառական մաթեմատիկայի և մաթեմատիկական ֆիզիկայի պրոբլեմների հետ։

Բաժանմունքն աշխատում է նաև մեխանիկայի խնդիրների վրա։ ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ն. Ռ. Հարությունյանին են պատկանում խոշոր արդյունքներ նյութերի սողունության տեսության բնագավառում։

Խոշոր հետազոտություններ են կատարել կոսմիկական ճառագայթների կազմի ուսումնասիրության բնագավառում մեր ֆիզիկոսները։

Անցած տարիների ընթացքում կազմակերպվել է Բյուրականի աստղադիտարանը, որտեղ գլուխ աշխատանք է ձեռնարկված Գալակտիկայի կառուցվածքի ուսումնասիրության բնագավառում։ Այդ աստղադիտարանի կոլեկտիվի աշխատանքը օժանդակում է սովետական աստղագիտությանը՝ լուծելու երկնային մարմինների առաջացման և զարգացման պրոբլեմը։ Վերջին ժամանակներում աշքի են ընկել ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների թեկնածու Բ. Ե. Մարգարյանի աշխատությունները, որոնք նվիրված են աստղակույտերի զարգացման հարցին։

Ժողովրդական տնտեսության կարևոր պրոբլեմների լուծման հետ է կապված Տեխնիկական գիտությունների բաժանմունքի աշխատանքը։ Դրկրաքանները մեծ ջանքեր են նվիրում ռեսպուբլիկայի ընդերքում գտնվող հարստությունների հետազոտման գործին։ ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Հ. Գ. Մաղաքյանի և երկրա-հանքաբանական գիտությունների թեկնածու Ս. Ս. Մկրտչյանի աշխատանքները ռեսպուբլիկայի մետալոգենիայի բնագավառում՝ հարստացնում են մեր գիտնականներին օգտակար հանածոների հանրավարտերի մասին։

Հայտնին հայտնի է, որ Սովետական Հայաստանը չափազանց հարուստ է շինանյութերով։ Առանձնապես աչքի են ընկնում շինարարի տարբեր տեսակները, այդ թվում տուֆերը, թեզիտները, անտիպտները, բազալտը և գրանիտը։ Նախկինում քարի մշակումը կատարվում էր միայն ձեռքով։ Մեր գիտնականները ուսումնասիրեցին քարհատման հետ կապված ֆիզիկական պրոցեսները ու ստեղծեցին քարհատ հատացներ, և այժմ քարի մշակումը ամբողջ ռեսպուբլիկայում մեքենայացված է։

Հետաքրքիր աշխատանքներ է կատարել բետոնի ու երկաթբետոնի ուսումնասիրության գծով տեխնիկական գիտությունների թեկնածու Մ. Զ. Սիմոնովը։ Այժմ թեթև բետոնը լայնորեն կիրառվում է մինչև անգամ հիդրոտեխնիկական շինարարության մեջ։

Հիդրոտեխնիկական շինարարության համար խոշոր նշանակություն ունեն նաև այն աշխատանքները, որոնք կատարվում են Ջրա-ենթադետիկ ինստիտուտում, ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ի. Վ. Ղազարյանի գլխավորությամբ։

Հայտնի է, թե ինչպիսի մեծ թափով է զարգանում Հայաստանի քիմիական արդյունաբերությունը։ Մեր քիմիկոսները կարևոր աշխատանքներ են կատարել Հայաստանի հումքային ռեսուրսների օգտագործման նոր ձևերի մշակման ուղղությամբ։ Այստեղ աչքի են ընկնում քիմիական գիտությունների թեկնածու Ա. Գ. Մանվելյանի և քիմիական գիտությունների դոկտոր Ա. Բ. Բաբայանի աշխատանքները։

Լավ արդյունքների է հասել նաև էլեկտրատեխնիկայի լաբորատորիան՝ Մոսկվայի էլեկտրամեքենաշինական ինստիտուտի հետ համատեղ մշակելով էլեկտրաքարտուղի նոր սխեմա։

Մեր բուսաբանները ուսումնասիրում են ռեսպուբլիկայի բուսական ռեսուրսները և կանաչապատման խնդիրները։ Այս բնագավառում աչքի ընկնող տեղ է գրավում բիոլոգիական գիտությունների դոկտոր Վ. Հ. Ղազարյանի աշխատանքը բույսերի ֆիզիոլոգիայի գծով։

Կենդանաբանական ինստիտուտը միջոցներ է մշակում կրծողների և գյուղատնտեսությանը վնասող այլ կենդանիների դեմ պայքար մղելու համար, ուսումնասիրում է ռեսպուբլիկայի կենդանական աշխարհը։

Հենվելով ռուս մեծ ֆիզիոլոգ Ի. Պ. Պավլովի ուսմունքի վրա, ֆիզիոլոգները մշակում են բարձր նյարդային համակարգության հարցերը։ Այստեղ խոշոր նշանակություն ունեն նյութափոխանակման վերաբերյալ ֆիզիոլոգիական հետազոտությունները, որոնք կատարվում են բիոքիմիական մեթոդներով։ ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Հ. Ա. Բունյաթյանի դեկավարությամբ։

ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Լ. Մնջոյանի կողմից դեկավարվող լաբորատորիան մշակում է գեղագործական քիմիայի հարցերը և ստեղծել է մի շարք նոր բուժիչ պրեպարատներ։

Լայն խնդիրներ են ծառացած Գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի առջև։ Մեր գենետիկների աշխատանքի արդյունքը եղավ գյուղատնտեսական կուլտուրաների մի շարք նոր, բերքատու սորտերի ստեղծումը։ Մասնավորապես Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Թուլքանյանն առաջարկեց և գլուխ ցանքատարածության վրա արմատավորեց ցորենի նոր սորտ։

Պտղաբուծության ինստիտուտը մեծ աշխատանք է կատարել ռեսպուբլիկայում եղած պտղատու ծառերի բազմատեսակ սորտերը հայտնաբերելու ուղղությամբ։

Ագրոքիմիայի լաբորատորիան մշակում է Հայկական ՍՍՌ պայմաններում հողերի պարարտացման լավագույն եղանակները։ Հողագետները պատրաստում են ռեսպուբլիկայի կուլտուրությունների հողային քարտեզները։ Դա մեծ նշանակություն կունենա գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման շատ հարցեր լուծելու համար։

Սակայն պետք է նշել, որ մենք դեռ քիչ ենք բավարարում ռեսպուբլիկայի գյուղատնտեսության պահանջները։ Դեռ բավականաչափ սերտ կապ չի հաստատված Գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի գիտնականների և կուլտուրատեսությունների միջև։

Հայ ժողովրդի պատմության, գրականության, լեզվի և արվեստի բնագավառում մեծ թվով հետազոտություններ է կատարել Հասարակական գիտությունների բաժանմունքը։ Վերջին տարիներս այդ ասպարեզում ձեռք բերված ամենաարժեքավոր նվաճումը պետք է համարել Հայաստանի պատմության, գրականագիտության, լեզվաբանության հիմնական հարցերի քննադատական վերանայումը մարքսիստական-լենինյան թեորիայի տեսակետից։ Այդ աշխատանքը դեռ շարունակվում է։ Վերջին տարիներս հիշյալ բնագավառներում լույս տեսած մի շարք աշխատություններ ցույց են տալիս, որ հասարակական գիտությունների բնագավառում մարքսիստական-լենինյան մեթոդոլոգիայի կիրառման շնորհիվ ներկայումս գիտական աշխատությունների մակարդակը շատ ավելի բարձր է, քան մի քանի տարի առաջ։

Գրականության ինստիտուտը վերջին տարիներս հրատարակեց հայ գրականության կլասիկներ Խ. Աբովյանի, Հ. Թումանյանի, Մ. Նալբանդյանի և Գ. Սունդուկյանի ստեղծագործությունները։

Հետաքրքիր հետազոտություններ է կատարում Լեզվի ինստիտուտը։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ հանդուցյալ Հ. Աճառյանը ավարտեց «Հայերեզվի լիակատար բերականությունը՝ համեմատած 562 լեզուների հետ» աշխատությունը։ Ներկայումս ինստիտուտը տպագրության է պատրաստել այդ ֆունդամենտալ աշխատության երկրորդ հատորը, որն ընդգրկում է դերանուններն ու նրանց տեսակները հայ լեզվում և աշխարհի լեզուներում։

Վերևում մենք բերեցինք միայն մի քանի օրինակ Գիտությունների ակադեմիայի աշխատանքից։ Այդ օրինակները կարելի է բազմացնել։ Դրանք վկայում են այն մասին, որ Գիտությունների ակադեմիայի այս տասը տարիների ընթացքում հաղորդվել է ուսեցել որոշ նվաճումներ։ Սակայն պետք է ասել, որ այժմ Գիտությունների ակադեմիայի առաջ դրվում են ավելի խոշոր և բարդ խնդիրներ։ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի 19-րդ համագումարը մեր գիտնականների առաջ խնդիր դրեց՝ համաշխարհային գիտության մեջ գրավել առաջին տեղը։ Այդ խնդրի իրականացումը բոլոր սովետական գիտնականներից, այդ թվում նաև մեր ակադեմիայի գիտնականներից, կրպահանջի վերացնել բազմաթիվ թերություններ գիտական աշխատանքում։ Մասնավորապես անհրաժեշտ է, որ ակադեմիան ավելի արդյունավետ աշխատի գյուղատնտեսական գիտությունների բնագավառում և դրանով օգնի կոլտնտեսային գյուղատնտեսությանը՝ իրագործելու ՍՍՌՄ Կենտկոմի Սեպտեմբերյան պլենումի որոշումները։ Մենք չափազանց քիչ ենք աշխատում լայն սպառման առարկաների արդյունաբերությանը օգնելու ուղղությամբ։ Այս թերությունը ևս պետք է վերացվի ամենակարճ ժամանակաժիջոցում։

Զնայած նրան, որ մեր գիտական կադրերի որակը բավականաչափ աճել է անցած տարիների ընթացքում, սակայն նոր խնդիրների լուծումը, նոր էքսպերիմենտալ մեթոդների արմատավորումը մեր ինստիտուտներում պահանջում է մեր բոլոր գիտնականներից, սկսած լաբորանտից մինչև ակադեմիկոս, անընդհատ սովորել և բարձրացնել սեփական գիտական մակարդակը։

Կադրերի գիտական մակարդակի բարձրացումը, ինչպես նաև առողջ քննադատության և ինքնաքննադատության լայն կիրառումը գիտական աշխատանքում՝ հնարավորություն կտան մեզ խուսափելու այն բանից, երբ լույս են տեսնում ոչ լիարժեք գիտական աշխատություններ։

Ակադեմիայի գոյության երկրորդ տասնամյակի շեմքին նրա ամբողջ կոլեկտիվը քաջ գիտակցում է, որ գիտության հաջողությունները մեր ռեսպուբլիկայում անհնարին կլինեին առանց եղբայրական ռեսպուբլիկների ակադեմիաների և առանձնապես ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի գիտնականների հետ ամենասերտ համագործակցության։ Ահա ինչու մենք պետք է ավելի ևս ամրապնդենք այդ համագործակցությունը։

Մեր բազմազգ Հայրենիքի բոլոր գիտնականների միահամուռ աշխատանքը թույլ կտա լուծելու այն խնդիրները, որոնք Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության կողմից այսօր դրվում են սովետական գիտության առաջ։